Բնակելի և հասարակական համալիրի կառուցման ծրագիր

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Փ. Բուզանդի փող. հ. 107 հասցեում կառուցել բնակելի և հասարակական համալիր, որը բաղկացած է «Ա» և «Բ» մասնաշենքերից: «Ա» մասնաշենքն ունի 8 հարկ, որի 1-ին և 2-րդ հարկերում նախատեսված են միմյանց հետ ներքին աստիճաններով կապվող հասարակական նշանակության տարածքներ, իսկ «Բ» մասնաշենքն ունի 17 բնակելի հարկ:
Կառուցապատման ծրագրի շրջանակում ստեղծվելու են կանաչապատ տարածքներ, ավտոկայանատեղեր: Համալիրը հարմարեցված և մատչելի է լինելու նաև հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար:

Տեխնիկական ցուցանիշներ

Հողամասի մակերեսը կազմում է 0.155 հա:
«Ա» մասնաշենքն ունի 8 հարկ, իսկ «Բ» մասնաշենքը՝ 17 հարկ:
Շինարարական ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 15 600 քմ:

Ծրագրի ժամկետներ	Ծրագրի իրականացման տևողությունը մինչև 3 տարի:
Ծրագրի արժեքը	Իրացման և շինարարության արժեքը կազմում է շուրջ 12 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի՝ «Դակոուս» ՍՊ ընկերության կողմից:
Ներկա իրավիճակ	Ընթացքի մեջ են կառույցի երկաթ-բետոնե հիմնակմախքի իրականացման աշխատանքները: